

**ՀԱՅ ՁԻՆՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻ ԺՈՂՈՎՆԵՐՆ ՈՒ
ՎՐԻԺԱՌՈՒՆԵՐԸ ԱՊՐԵՍ ԲԵԿՆԱԶԱՐՅԱՆԻ «ԳԱՂՏՆԻՔ ՂԱՐԱԲԱՂԻ»
ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Զինախոս Առաքելյան-Բալայան
Բանասիրական գիտությունների թեկնածու
ԱրՊԳ

Արցախագիտական միտքն հարստացնող պատմա-քննական, գրական-գեղարվեստական, բանահյուսական, քաղաքական և այլապես բնույթի հարցերի հետ միաժամանակ Ա. Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբարի»-ն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում հայ զինվորականության վարած կռիվների, քաղաքականության, գաղտնի ժողովների, հայ վրիժառուների, ապա նաև մելիքների, հոգևոր այրերի ու նրանց ունեցած արտաքին և ներքին հարաբերությունների մասին:

Հետաքրքիր ծրագրերով և նպատակաուղղվածությամբ էր ընթանում հայ զինվորյալների հրավիրած ժողովը: Նախագահում էր Քենդխուղա Խաչատուրը, որն անհետաձգելի և ստիպողական խնդիրներ է համարում հետեյալը (որոնք պետք է լուծվեն զորապետական խորհուրդներում): Դրանցից են՝ «ճրռ-խանութիւնն և ճրռ-մելիքութիւնը ոչնչացնելու խնդիր, հարազատ-մելիքութիւնը և հարազատ-կաթողիկոսութիւնը վերականգնելու խնդիր, մեր ընտանեաց կեանքի ապահովութեան խնդիր, մեր ծառայութիւնը վարձատրելու խնդիր, մեր կենաց խնդիր, Շահի և Մելիք-Մեծլունի հրաւերը ընդունելու կամ մերժելու խնդիր...»: Ժողովականներն արտահայտվում են հերթով, առանց մեկը մյուսին խանգարելու, հավասարակշռված, ազատ, անկաշկանդ: Կա պատվի և հայրենիքի հարց...

Աբրահամ Բեկնազարյանը՝ Մելիք Մեջլունի հմուտ և նվիրված հավատարիմ զորավարը, ծանրակշոր են է մեկնաբանում խոսքը հայրենիքի ճակատագրի վերաբերյալ. «Ղարաբաղի ճրռ-խանութիւնը և ճրռ-մելիքութիւնը եթէ մենք մեր ձեռքով ոչնչացնենք՝ շատ հեշտ է, իսկ եթէ Պարսից շահերին կամ այլոց յուսով թողնենք՝ ծանրակշիռ և դժուարալոյծ խնդիր է... Անցելոյն փորձերն պարզապէս ցոյց են տալիս, որ պարսիկ շահերն միշտ պահպանած են մեր երկրում ճրռ-խանութիւնը և սոցա գոյութիւնը, թէ և վերջիններս առաջնոց միշտ թշնամի եղած են և միանգամայն վնասակար»¹:

¹ Գաղտնիք Ղարաբաղի, Հեղինակութիւն Ապրեսի Բեկնազարեանց. Արդեանք և Ճախիւք Մեծապատիվ Տեառն Առաքել Աղա Ճատուրեան, Ս.Պետերբուրգ, Տպարան Ի.Ն. Սկորոխորովի, 1886 (այսուհետ՝ Բեկնազարեանց Ա.), էջ 38-39:

Աբրահամը ցավ է հայտնում, որ չնայած շահերը՝ Նադիրը, Ադիլը, ցանկանում էին Փանահին՝ շահության դեմ գործած քաղաքական հանցագործին, պատժել, բայց այդպես էլ նրանց չհաջողվեց դա իրագործել: Շահերը գիտեին Ղարաբաղի խաների թշնամի լինելը, սակայն պահպանում էին նրանց:

Մեր մեկ այլ՝ «Արցախը XIX դարի գրականության մեջ եւ մշակույթում» պատմաբանասիրական քննական տեսության I մասի՝ Պլ. Ջուբովի «Ղարաբաղի աստղագետը» պատմավեպի վերլուծության ընթացքում հանգամանորեն մեկնել ենք Ղարաբաղի խանության անբարո, անփառունակ հիմնադրի՝ Փանահի կերպարային զուգորդումները վիպական եւ պատմական լայն հենքի վրա, հայ եւ օտար աղբյուրների համադիր եւ հակադիր արժեքաբանական ասպեկտներում: Իսկ Փանահի ճակատագրի անիվի սրընթաց վայրէջքի մասին թողել ենք հետագա ծրագրայնության մեջ ճշտելու այն¹: Այժմ առիթը ներկայացել է: «Անդրկովկասյան պատմական վեպ»-ը՝ «Ղարաբաղի աստղագետը», վիպական երկ է (պատմավեպ է, իսկ Ա. Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի»-ն՝ պատմական ուսումնասիրություն) Փանահի գործունեության, քաղաքականության, լայն ռազմավարական նկրտումների մասին, որոնք ցույց ենք տվել մեր քննական տեսության մեջ, եւ որոնք, հարկավ, չէին կարող «Գաղտնիք»-ում տեսանելի լինել: Այժմ արժեքավորենք նաեւ ծրագրվածը:

Ազրայել-Աբրահամ Բեկնազարյանը պարսից շահերի երկերեսանիության, երկդիմի քաղաքականության եւ Ղարաբաղի խանության ճակատագրի շուրջ խոսում է ցավով եւ համոզվածությամբ, ինչու չէ՝ նաեւ ճարտասանական որոշակի ունակությամբ, մտքերի կշռադատվածությամբ (որն անընդհատ եւ անհարկի զայրացնում է Րաֆֆուն)², որտեղ փաստված է Ուրմեցի Փաթալի խանի՝ 1761 թվականին դեպի Ղարաբաղ կատարած արշավանքի մասին: Փաթալին Ղուրանով երդվել էր Ադիլ շահից գաղտնի ձեռք բերած Փանահի՝ Ղարաբաղի խանությունը հաստատող շինծու հրովարտակը չեղյալ համարել: Երդումը դիտմամբ կրկնում է Ջրաբերդի Մելիք Ադամի եւ Գյուլիստանի Մելիք Յովսեփի մոտ, նրանց օգնությամբ գրավում Շուշին, 15.000 թունան փող վերցնում Փանահից՝ դրժում յուր երդումը, Փանահի Իբրահիմ որդուն պատանդ վերցնում, ոչ մի կերպ չզնահատելով հայ մելիքների ցուցաբերած օգնությունը եւ Փանահին

¹ Տե՛ս Առաքելյան-Բալայան Զ., Արցախը XIX դարի գրականության մեջ եւ մշակույթում, (պատմաքննական տեսություն), մաս I, Պլատոն Ջուբովի «Ղարաբաղի աստղագետը» պատմավեպը, Ե., «Հայաստան», իր., 2004 (այսուհետ՝ Առաքելյան-Բալայան Զ.), էջ 141:

² Րաֆֆի, Գաղտնիք Ղարաբաղի, Եժ, 10 հատ., տասներորդ հ., Ե., Հայպետհրատ, 1959 (այսուհետ՝ Րաֆֆի), էջ 472-478:

թողնելով յուր կեղծ խանության պաշտոնում՝ գնում Ուրմիա բերդը. «Սոյն Փաթալի-խանն սպանած էր Ձենդ-Ասկեար-խանը, որի եղբայր Քեարիմ-խանն, իւր եղբոր վրէժը լուծելու համար, ռմժա (1762) թուին յարձակում է Ուրմի բերդի վերայ, գրաւում զայն, Շիրազ տանում Իբրահիմը և իւր եղբայրասպան Փաթալի-խանը. վերջինս սպանում և առաջինը ողջ պահում: Փանահ ճըռ-խանն երբ լսում է՝ առնում է քսան հազար թուման փող և իւր որդին ազատելու համար ընծայ տանում Քեարիմ-խանին: Փանահ ճըռ-խանն երկու տարի մնում է Շիրազում, բայց ոչ կարողանում է զինքը ազատել Ձենդ-Քեարիմ-խանի ձեռքից և ոչ իւր որդի Իբրահիմը: Փանահ ճըռ-խանն սատանայական խորամանկութեամբ մեռած է ձևանում և դազադում երկարում, որպէս զի իբրև մեռեալ Ղարաբաղ հասնի: Ձենդ-Քեարիմ-խանն, իմանալով այս սատանայութիւնը՝ Փանահ ճըռ-խանի փորը պատառել է տալիս, որ մինչեւ Ղարաբաղ չհոտի: Արդ՝ քանի որ Ձենդ-Քեարիմ-խանն իւր աչօք տեսաւ այդ տոհմի խարդախութիւնը, քանի որ ողջ Փանահի փորը ճեխկել տալով սպանեց և ճըռ-խանութիւնը ևս նորա հետ՝ ուրեմն եթէ ճըռ-խանութեան բարեկամ չէր, ի՞նչ հարկ կար նենգութեամբ սպանուած նենգ հօր ամենամենգ որդի Իբրահիմը խան անուանել ռմժգ (1764) թուին, խանութեան տիտղոսով Ղարաբաղ դրկել և ճըռ-խանութեան շղթան կրկին ամրապնդել»: Բեկնազարյանը իրերի տւթյունը քննում է ըստ տւթյան՝ բավականին ընդգծված քաղաքական հասկացողությամբ: Կարելորն այստեղ երեւութի գաղափարական եւ ամենակարելորդ, պատմական լուրջ հատկանիշ, որակ ունենալն է. իսկ այսպիսի խոսակցություններ չեն երեւում «Խամսայի մեղիքություններ»-ում: Որակ կազմող հատկանիշ է նաեւ Բեկնազարյանի՝ այդ ամենից եզրակացության գալը. «Ահա այս Իբրահիմ ճըռ-խանն է, որ այսօր ապստամբելով կռոււմ է Պարսից շահերի հետ: Բայց այս ևս պատմական ճշմարտութիւն է, որ այդ ճըռ-խաները հաստատող շահերն ևս ճըռ-շահեր էին և ոչ թե հարազատ շահեր, քանզի այդ ժամանակներում շահութիւնը յափշտակելու համար մէկգմէկ սպանում և շուտ շուտ գահակալում էին»: Բեկնազարյանը հմտությամբ, պատմական փոքր էքսկուրս կատարելով՝ ոչ հեռավոր անցյալում տեղի ունեցած երեւութները, կապված Ղարաբաղի քաղաքական նկարագրի եւ ճակատագրի հետ, շաղկապելով դրանք ներկայի՝ նույնքան բարդ ու խառնակ ժամանակաշրջանի պատմական անցքերի հետ, անում է հետեւյալ ընդհանրացումը: «Այս պատմական, անհերքելի փաստերիս հետևութիւնն շատ պարզ է: Աղա-Մամատ-Շահն ևս թէպէտ անսուտ երդմամբ խոստացած է մեղիքին՝ ջնջել Ղարաբաղից ճըռ-կաթողիկոսութիւնը, ճըռ-մեղիքութիւնը և ճըռ-խանութիւնը և յաղթանակաւ վերանորոգել հարազատ-կաթողիկոսութիւնը, հարազատ-մեղիքութիւնը իւրեանց ազատ և

անկախ իրաւունքներով՝ սակայն հաւատալի է միայն որ ներկայ Շահն ևս կը հետևի իւր նախորդներին, կըսպանէ Իբրահիմ ճըռ-խանը և խան կը հաստատէ նորա որդի Մէյտի-Ղուլին: Օտարն միշտ օտար է. օտարն ունի միշտ իւր կեղծ քաղաքականութիւնը և գիտէ գործիք անել մեզ նման անքաղաքագէտ, դիւրահաւան, պարզ և խեղճ արարածները»: Սրանք առավելագոյն հավանականութեան գնացող մեկնումներ են, իսկ եզրակացութիւնը գերապատիվ է. եթէ հնարավորվեր ու եթէ արցախցի բոլոր կարող ուժերն այն ցանկանային: «Աւելի լավ է,- շարունակում է Աբրահամ Բեկնազարյան գորավարը՝ հերոսական Մելիք Մեջլումի գինվորը, այն մելիքի, որը ճանապարհներ էր փնտրում «Ղարաբաղի խանութիւն» կոչված վտանգավոր երեւոյթը ջնջել յուր երկրից, որպէս թունավոր պալար,- որ մենք մեր յոյսը մեր վերայ դնենք, մեր ուժերը միացնենք և միացեալ ուժով կարգի դնենք մեր գործերը»¹:

Զինվորյալները միանշանակ քննադատում են թե՛ ներքին եւ թե՛ արտաքին անմիաբան, քայքայիչ ուժերի ջանքերը՝ ջլատել Ղարաբաղը, տիրանալ նրան, դարձնել անողնաշար, անիշխան, որպիսին Ղարաբաղը գրեթէ երբեք չի եղել եւ չի ունեցել նման քաղաքական կյանք: Մի մասը հակված է ռուսներին հարելու, նրանցից օգնութիւն սպասելու կարծիքին: Գայլ Օհանին հակաճառելով՝ Բեկնազարյանը նկատում է. «Օտարներից օգուտ սպասելն յիմարութիւն է: Ամեն կառավարութիւն ունի իւր քաղաքական շահերը և միշտ ձգտում է յօգուտ իւր ընդլայնել այդ շահերը, մանաւանդ շատ անգամ գործիք անելով մեզ նման անհեռատես և անքաղաքագէտ յիմարները զանազան խոստումներով, և իւր գործը վերջացնելուց յետոյ ամեն ինչ անկատար թողնով»: Գալով Ղարաբաղի՝ ռուսների կողմից 1700-ական թվականներից սկսած օգնութեան ակնկալութեանը եւ, ընդհանրապէս, այս կապակցութեամբ պետութիւնների քաղաքական ինտրիգներին՝ Բեկնազարյանը եզրակացնում է. «...Վերջապէս Ռուսաց այս Կայսրն (Պետրոս Մեծը - Ջ. Ա.-Բ.), որ խոստացած էր Հայոց ուժերով Հայոց օգնել և Հայերը Պարսից լծի տակից ազատել՝ ինքն մի դաշնադրութեամբ, որ Պարսից հետ էր, գրաւում է Ղարաբանդը, Բագուն, Մազանդարան և Գիլան, իսկ միւս դաշնադրութեամբ ռճճ (1724) թուին՝ Օսմանցւոց նուիրում Շամախին, Նուխին, Ղարաբաղը, Վրաստանը, Արարատեան և Ատրպատական նահանգները»²:

¹ Բեկնազարեանց Ա., էջ 38-42:

² Նույն տեղում, էջ 43, 44, 46:

Պատմության մեջ պահպանված է ժամանակագրությունը, նույնիսկ ժողովականներն իրենց մտքերը շարադրում են ըստ կարգի՝ ժամանակադեմ, առանց իրար ընդհատելու: Խոսվում է Նադիր շահի կողմից, նրա թագադրության ժամանակ (1736) Դիզակի Մելիք Ավանին՝ Խանի, Ջրաբերդի Մելիք Ալահ-Ղուլուն (սուլթանի տիտղոսներ), Յայոց եւ Աղվանից կաթողիկոսներին եւ մեծ արտոնություններ, շնորհներ, պարգևներ տալու մասին, իսկ որպես ռուսական կողմնորոշման հարողներ՝ մնացին Ներսես կաթողիկոսը եւ Ղարաբաղի հինգ մելիքները¹:

Ժողովականները նախատինքի խոսքեր են ուղղում Յովսեփ արքեպիսկոպոս Արղությանի հասցեին՝ նրան վերագրելով հայ հոգեւոր եւ աշխարհիկ տերերին ու ժողովրդին հասած վնասների ծանրությունը՝ մի մասին գաղթեցնելու, մյուսին՝ տկարացնելու պատճառով: Մենք այս կարեւոր օղակները քննել ենք նաեւ «Արցախը XIX դարի գրականության մեջ եւ մշակույթում» ուսումնասիրության մեջ՝ տարբեր աղբյուրների, տարբեր մեկնումների համադրական եւ հակադրական օղակներում եւ տվել գիտական արժեք²:

Քյարվան-Ղռան Բրուտը Վարանդայի Մելիք-Շահնազար II-ին (ուսումնասիրության մեջ՝ III) անվանում է մեկը, որի արգանդում հղացավ Ղարաբաղի խանության ստեղծման գաղափարը: Ստեղծված Ղարաբաղի խանության չհաստատված խանը՝ Փանահը, պատռելով սնուցած արգանդը՝ իժի նման դուրս սողաց, որջացավ անմատչելի Շուշիի օձածակում, «հանեց իւր գլուխը այդ բարձրութիւնից, ցոյց տուաւ Ղարաբաղին իւր թունալի ժանիքները, իսկ ան անուանեց զինքն և չարաթոյն ժանիքներով մահ սպառնացաւ զինքը խան չընդունողներին»: Քաջ զինվորականը, հետամուտ յուր մտքերի սեւեռուն ընթացքին, շարունակում է. «Յանցանքն մեր անհեռատես մելիքներինն է. մեզանից ամեն ոք միայնակ կարող էր ցարդ ջախջախել այդ իժ օձի գլուխը: Ո՛չ միաբանելու հարկ կայ և ո՛չ բազմաց աջակցութեան: Յանցանքն ո՛չ այս տէրութեանն է և ո՛չ այն, այլ մեր անհոգութեան, որով ցարդ կենդանի պահեցինք այդ վնասակար օձը»³:

Պատմական այս անցքերը վիպականացրել է Պլ. Զուբովը «Ղարաբաղի աստղագետը» (1834, Մոսկվա) պատմավեպում, որը բազմակողմանի քննության է ենթարկվել մեր կողմից՝ վերոնշյալ ուսումնասիրության մեջ:

Ժողովականներից Դե (Տօժ)-Գասպարն առաջարկում է. «Տղէք, պարսիկ թովիչն (Շահն) եկած է այդ իժ օձը բռնելու և նորա թունալի ատամ-

¹ Նույն տեղում, էջ 46-47:

² Տես Սոաքելյան-Բալայան Զ.:

³ Բեկնագարեանց Ա., էջ 48-49

ները արմատախիլ հանելու»: Բուրը միասին. «Տղէք, գնանք, գնանք... այդ ճրո-կենդանիքն կեանք ընդունած են Հայերից, պետք է ընդունին և մահ Հայերից»¹:

Չափար-Սարասարը միաբանության, կենտրոնաձիգ իշխանության գոյության նախանձախնդիր է. «Երբ մեր մելիքներն մի բերդ միայն կունենան կը դադարին ներքին խռովութիւններն, կամբողջանան ցրուած ուժերն, կամրապնդուին ներքին սիրոյ և միաբանութեան կապերն և դիւրին կը լինի միացեալ ուժով պատերազմել միայն արտաքին թշնամեաց հետ»²:

Պալլ Ղարախան-Յուզբաշին զորաց միաբանությունը միաբանությունն է համարում մելիքների, որոնք կնստեն Շուշի բերդ-ամրոց քաղաքում՝ «վասն զի թէև շատ ուշ՝ սակայն նոքա (մելիքները - Ջ. Ա.-Բ.) համոզուած են անցեալի երկպառակութեան փորձերով և ջլատուած ուժերի տկարութեամբ, որ խիստ թանգ նստաւ Ղարաբաղի Հայոց վերայ»,³- եզրահանգում է Պալլ Ալբեթյուն-Բատին (Բաղդասարը):

Երբ Րաֆֆին հեզնում եւ անմտություն է համարում «Գաղտնիք»-ի հերոսների այն քայլը, թե ինչպես են նրանք փորձում բացահայտ գործել ընդդէմ Իբրահիմի, կոտորել նրա լրտեսների գլխավորած զորքը, երբ նրանց ընտանիքները գտնվում էին բերդում⁴, զինվորներից Ազնավուր Ուհանը նկատում է. «...Եթէ մենք մեր գերդաստանը Շուշի փոխադրեցինք՝ այդ քաղաքականապէս նշանակում է որ մենք զիրենք բարեկամ համարած ենք և ոչ թշնամի իրաց այս վիճակում: Իսկ այժմ նոքա, այս ամենը իմանալով հանդերձ, ընկան իւրեանց լարած թակարթի մէջ: Ուրեմն ոչ եթէ մենք կամաւ գնացած և միացած կը լինինք Շահի բանակին, այլ իւրեանց նենգութիւն ստիպած կը լինի զմեզ՝ դիմել այդ միջոցին»⁵:

Րաֆֆուն անհանգստացնում է այն միտքը, թե ինչպես կարող է Աղա Մահմեդ շահը երկու դատարկ գյուղեր ոչնչացնելու համար 7.000 զինվոր ուղարկել⁶: Հարցն այստեղ գյուղերը չեն, այլ նրանց զինվորյալները՝ պատմության զինավառ եւ հաղթական, հայրենի ազատության եւ սրբությունների հարգն իմացող 80 քաջ զորականները:

Ձարպազան-Եողուրլուն հետաքրքիր ձեւակերպումով մեկնում է յուր հայրենանվեր ընդհանրականը. «Քաջութեան ծնողն Հայրենիքն է, սիրտն՝

¹ Նույն տեղում, էջ 49:

² Նույն տեղում, էջ 50:

³ Նույն տեղում, էջ 51:

⁴ Տես Րաֆֆի, էջ 473:

⁵ Բէկնագարեանց Ա., էջ 52:

⁶ Տես Րաֆֆի, էջ 471-472:

վառարան դիւցազնութեան և դիւցազնութիւնն՝ փրկութիւն Հայրենեաց: Ղարաբաղի շնորհիւ մենք ունինք այս ամենը: Ուրեմն, տղէք, այլ ևս ո՞ր ժամի էք սպասում...»¹: Ա. Բեկնազարյանը՝ պատմությունը հյուսողը, պատասխանատվությամբ պատմագրում է. «Խորհրդականաց խօսքերն նոյնութեամբ գրուեցան. թերևս ապագայ սերնդոց օգտակար կը լինին»²: Հարկավ՛, մեկնության այս պահի դրությամբ այն անչափ գնահատելի է...

Հեղինակը նախապէս հորը բնութագրելով որպէս ամենաքաջ այր՝ միաժամանակ ներկայացրել է Խնածախ գյուղի զարմանալի հատկանիշներով օժտված, ըստ բնավորության գծերի՝ մականվանյալ հերոսների շարքը...

Նա պատմության առաջին գրքի Ձ գլխում մեկնաբանում է ընթերցողների աչքին անսովոր եւ խորթ՝ հերոսներին տրված մականունների շարքը, որոնք նաեւ նրանցից յուրաքանչյուրին տրվել են ըստ իրենց կատարած քաջագործությունների, ունեցած շնորհների: Շատերին մականունները շնորհել են կաթողիկոսներն ու մելիքները, այլոց՝ ժողովուրդը, որը մի կողմից սիրել, մի կողմից մեղմ հեզմել է նրանց՝ յուր սիրեցյալներին³:

«Այս անուանց հետ կապուած են և պատմութիւններ, զորս հարկ է համառօտիւ նկարագրել: Բեկնազարյանը ներկայացնում է այն քաջերին եւս, որոնց հետ պատմության ընթացքում ընթերցողը նոր պիտի ծանոթանա: Դրանցից են՝ «Քեալլակէօզ-Առստամ, Ուզունդլիճ-Սայի, Պաթմանդլիճ-Մարտի, Պաթմանթօփուզ-Թէոս, Անյաղթ-Ղազար, Քաչալ-Սօսի, Քօսակ-Գիւզի, Գիժ-Մեքի, Թոխմախ-Սափարի, Ջնտան-Աւթանտիլ, Շիր-Նասիպ, Պէպիւռ-Մախմուր, Անգութ-Խաչի, Նէառ-Եղիազար, Թիլի-Արզուման, Բասարկեչէր-Գեափի, Դէլի-Մահրասա, Դէլի-Քեշիշ, ևն:- Դրանցից Կաքել-Չաքին (մականուն է ստացել Գանձասարի Ժ. Հովհաննես կաթողիկոսից) հետաքրքիր պարտավորություն ուներ նաեւ,- մի մահակ, որի մէջն պարապ էր: Չեռնափայտն բաղկացած էր երեք կտորներից, որք միանում էին պտուտակներով և կտորներն անյայտանում էին երկու արոյրէ կապերով: Աջ ոլորելով բանում էր, նամակները զետեղում միջում և ձախ ոլորելով կրկին ամրացնում: Ահա Կաքել-Չաքին (Կաքավ Չաքարիա) այս մահակով էր իւրեանց հասցէներին հասցնում անվտանգ՝ որևիցէ զաղտնի նամակներ»⁴: Հերոսներից յուրաքանչյուրն ունի յուր արժեքավոր նշանաբաներով:

¹ Բեկնազարեանց Ա., էջ 54:

² Նույն տեղում, էջ 54, 55:

³ Տես նույն տեղում, էջ 21, 55:

⁴ Նույն տեղում, էջ 55-56:

Իհարկե, Ղարաբաղի ճակատագրի համար օրհասական այն ժամանակներում, երբ թե՛ օտար բռնակալները, թե՛ բախտախնդիր խան կոչեցյալները, թե՛ անօրեն մելիքություն ստացած մելիքները, թե՛ անօրեն կաթողիկոսություն ստացած կաթողիկոսները շտապում էին անձնականության դիրքերից քայքայել հայրական ստացվածքները, շենացնել անմիաբանության որոմը, այդ անբարոյական մարմինը ներկայացնել շենշող ու ցանկալի, ապա, ըստ այդմ էլ՝ առողջ ուժերը, կենտրոնաձիգ ձգտումները պետք է գործեին երիցս զգույշ: Պատմության մեջ խնդրո առարկա երեւոյթի շուրջ ընդգծված ենք տեսնում գաղտնի ժողովների առկայությունը, որոնք գումարվում էին Գանձասարում՝ միաբանության ուխտին նվիրյալ անձանց կողմից: «Գաղտնիք»-ում առաջին գաղտնի ժողովը թվագրված է ռմլդ (1785) թվականից: Այնտեղ ներկա էին բոլոր մելիքները՝ բացի Սելիք Շահնազար II-ից, «Գաղտնիք»-ում՝ Գ-ից, զորավարները, յուզբաշինները, վանահայրերը: Նախագահում էր Ժ Հովհաննես կաթողիկոսը: Պատմության մեջ շարադրված է ներկաների ցանկը: Նրանք գաղտնի հրավիրվել էին Կաքել Ջաքու միջոցով¹:

Ժողովում բացահայտվում են Ղարաբաղի ճակատագրի հետ կապված պատմական իրադարձությունները, Ղարաբաղի «խաների»՝ Փանահի, Իբրահիմի սարսափելի խարդախությունները, առողջ եւ անառողջ ուժերի բախումն ու դրանց հետեւանքները, ժողովողի եւ նրա ճակատագրի պաշտպան թելի ձգտումները, որոշումները, նպատակաուղղվածությունը, հրատապ խնդիրները, հուսացումները, պայքարի ձգտող ոգու դրսեւորումները: Դրանք պատմական հիմք եւ քաղաքական գաղափարաուղղվածություն ունեցող վավերականություն ունեն եւ Արցախի պատմության տվյալ ժամանակաշրջանը վերհանող պատմական, քաղաքական կարեւոր գործոններ են հանդիսանում:

Գաղտնի ժողովի քաղաքական ուղղվածությունը կողմնորոշումն ու հուսացումներն էին դեպի ռուսական կայսրությունը: Ժողովականներին մի փոքրիկ պատմական հղում կատարելով՝ նախագահող կաթողիկոսը խոսում է մեծ կարեւորություն ունեցող փաստաթղթի՝ հանրագրության ստեղծման մասին՝ ընդգծելով հետեւյալը. «Այժմ ևս ամենակարևոր է գրել և Եկատերինէ Բ. կայսրուհուն ղրկել մի հանրագրութիւն, որն հիմնուած կը լինի մեր նախնեաց ցարդ շարունակած մի և նոյն պայմանների վերայ, զորս քաջ գիտէք ամենեքեանդ»²: Փաստաթուղթը Կաքել Ջաքու միջոցով

¹ Տես նույն տեղում, էջ 56-58:

² Նույն տեղում, էջ 59, տես էջ 60, 61:

ուղարկվեց Թիֆլիսի (Տփղիս) Հայոց առաջնորդին՝ Արղուբյանին փոխանցելու համար: Այդ կարելու փաստաթղթի մեջ ցուցված էր, թե Ռուսաստանը ինչ կերպ պետք է օգներ հայերին, ինչ իրավունքներով պետք է Ղարաբաղը մտներ Ռուսաստանի հովանավորության ներքո: Դիզակ գավառի Տողի բնակիչ Շեյթան (սատանա) Թունուն վերապահվեց լրտեսի պաշտոն: Վերջինս անմիաբանների բոլոր գործողություններին հետեւում է և հայտնում էր կաթողիկոսին ու մելիքներին:

Շեյթան Թունին հաճախակի էր կերպարանափոխվում և մելիքների, հոգևոր այրերի հանձնարարությամբ գաղտնիքներ կորզում մերթ Իբրահիմից, մերթ անօրեն մելիքներից, մերթ Իսրայել կաթողիկոսից՝ դրանք հաղորդելով ըստ պահանջի դիտվող անձանց, հանդես գալով դերվիշի, մանրավաճառի, Մելիք Շահնազար II-ի, մուլլայի, զվարճաբանի, ակնավաճառի, քահանայի, խենթի, մուրացկանի, հմայողի կամ պարսից շահի բանբերի և այլ կարգի մարդկանց դերերում...

Հաճախ նման վտանգավոր ճանապարհորդությունները նա կատարում էր Մելիք Շահնազարի զվարճաբան, իմաստասեր Պըլը-Պուղու (խենթ Պողոս) հետ: «Գաղտնիք»-ում Պըլը-Պուղին անվանված է առակախոս, սրախոս-զվարճաբան. նա վայելում էր հասարակության, մելիքների (մինչև և անգամ՝ անօրեն մելիքների) ջերմ սերն ու համակրանքը: Վերջինիս կողմից Շեյթան Թունին վերանականուն ստանալով՝ անվանվում է «Այր Աստուծոյ, Ամբակուն Մարգարէ», այսինքն՝ կանխատես մարգարե, հնարագետ¹:

Պատմության հերոսների անսովոր անունները նրանց հաճախակի տրվել են ըստ իրենց արտասովոր հատկությունների՝ մելիքների, կաթողիկոսների կամ խաների, մարտական ընկերների, ժողովրդի կողմից: Այս պարզաբանմանը մենք անդրադարձել ենք, սակայն հեղինակի ներկայացրած հերոսների նոր շարքի մականուններին ու նրանց հատկանիշների պարզաբանմանը հետեւելով, նշում կատարեցինք²:

Սրանք անվանի ու քաջակորով, հսկայական ուժի, խելքի, ճարակության, արագության, սրատեսության, գիշերատեսության, կանխատեսության, վեհանձնության, աներկյուղության, ահարկության և այլևայլ արժանիքներով օժտված զորականներ էին, զորավարներ, մեծ հայրենասերներ, որոնց մասին հյուսված պատմությունները ժողովուրդը, ընկերները հիացմունքով և սիրով, իսկ թշնամիները՝ սարսափով էին հիշում և պատմում... Նրանք այս կամ այլ մելիքական տների նվիրյալներ էին, ընդ-

¹ *Նույն տեղում, էջ 62-63:*

² *Տես նույն տեղում, էջ 63-71:*

հանրության մեջ՝ միաբանության եւ հայրենապաշտության ուխտյալներ, իրենց տերերի, ժողովրդի ձայնին ի տրիտուր... Պատմության մեջ (Ձ եւ այլ գլուխներում) հերոսները, որ տարբեր արհեստների տեր են, կանչ ունեն հայրենյաց՝ նրա օրհասական պահերին...

Թօփուզ (թուրք.՝ գլուխը գնդածեւ ձեռնափայտ) Աշուղ Ղարա (սեւ, նախկինում՝ Ասրի-Ասատուր - Ձ. Ա.-Բ.). «Թօփուզ» մականունը «Աշուղ» բառի հետ կցած է հայ հասարակութիւնը առնելով սորա հասակի կարծութիւնիցն և թրի արագաշարժ ելևէջիցն... արուեստիւ աշուղ էր և երգում էր յանպատրաստից, հոգեբուղիս և սրտաշարժ երգեր: Բայց երբ տեսաւ հարազատ-մեղիքների և կաթողիկոսների տագնապալից դրութիւնները, կրօնի, կենաց և ընչից անապահով վիճակը՝ Հայրենիքը պաշտպանելու եռանդով թողեց սազը և եռացեալ աւիւնով զէնքեր առած դաշտ իջաւ, յիշատակ թողնելով սոյն նշանաւոր խօսքերը.

«Սազդ վեր դիր ¹ ,	(¹ Վայր դիր)
Եարաղտ երկալ ² , Աշուղ-Ղարա.	(² Ձէնքերդ վեր ա՛ռ)
Սազն ու խաղը ազգ չեն պահում,	(³ Ասպարէզ դուրս ե՛կ)
վախտն փոխուալ ա.	
Եարաղտ կապի՛,	
մէյտան դիւս ե՛կ ³ , ջրիտ խաղա ⁴ .	(⁴ Ձէնք և թուր շողացո՛ւր)

Հայի տիւշման սև ղօշունը լոխ գոնդ ըրա՛»⁵: (⁵Բոլորը կոտորի՛ր, գլխատի՛ր)»¹:

Երբ Մելիք Շահնազարը չարություն հղացավ մտքում՝ հափշտակել ավագ եղբորից՝ գրասեր կաղ Հովսեփից Վարանդայի մելիքության ավագությունը, մի գիշերվա մեջ կոտորել տվեց նրա ընտանիքը՝ եղբորով հանդերձ, իսկ Մելիք Հովսեփի երեխաներից մեկին, որ մանուկ էր, փախցրին պապի հովանավորության ներքո՝ Խաչեն, քանի որ մելիք Հովսեփը Խաչենի մելիքության Ջալալյան տոհմի փեսան էր: Պատմական ահա այս քստմնելի փաստի մասին է հետեւյալ հատվածը, որտեղ գործող կերպար է նաեւ Փիլ (փիղ) Առուշանը. «ՌՄԳ (1754) թուին Փանահ ճըռխանն, միաբանելով իւր դաշնակից Մելիք-Շահնազար Գ-ի հետ՝ մեծ զօրքով յարձակեցաւ Խաչենի Ուլու-Պապ բերդի վերայ, ուր ամրացած էր Ջալալեան Մելիք-Ալլահվերտին իւր զօրքով, որի առօրեայ զօրավարն էր այս Առուշանն: Մելիք Շահնազարի չար դիտաւորութիւնն էր Փանահ ճըռխանի միջոցաւ ջնջել Ջալալեան հարազատ-մելիքութիւնը և հիմնել մի ճըռ-մելիքութիւն այդ գաւառում. քանզի տոհմային (վերոդիտվածի մասին է հիշեցումը - Ձ. Ա.-Բ.) գործոց պատճառաւ Մելիք-Շահնազար Գ-ն ուղտի ոխակալութիւն էր տածում Ջալալեան տոհմի դէմ:

¹ Սույն տեղում, էջ 69, 70:

Այս Առուշան գորավարն դարանամուտ եղաւ իւր գօրքով Պոկեսբերդի կիրճում, որով Ուլու-Պապ անցնելու էր թշնամու գօրքն, կոտորեց այդ հայ և թուրք միացեալ բանակի ամենամեծ մասը և մազապուրծ մինչև Շուշի հալածեց Փանահ ճըռ-խանը և չարագործ Մելիք-Շահնագար Գ-ը: Ահա այս տղամարդութիւնը վարձատրելու համար «Փիլ» մականունը տուած է սմա Ջալալեան Մելիք-Բէկեան Մելիք-Ալլահվերտին»¹:

Պատմության մեջ փոքրիկ դադարով հեղինակն ակնարկում է թշնամյաց պարսից, հռոմեացիների, հույների, թուրքերի, թաթար-մոնղոլների, արխազների, վրացիների, Դաղստանի լեռնականների եւ այլոց արշավանքների ձեռնից հասած ավերածությունների մասին՝ ընդգծելով այն հանգամանքը, որ դրանցից անմասն մնացին Մեծ եւ Փոքր Սյունիքները: Հայրենի բնությունը եւս անպարտ ու խորհրդավոր զորաբանակ է եղել օտար հրոսակների դեմ, եւ բնության խորհրդին համապատասխան է հայ մարդու նահապետական կյանքը՝ յուր խայտաբղետ լանդշաֆտով. այս մասին խոսել են օտար եւ հայ պատմիչներն իրենց երկասիրություններում. «Ղարաբաղի անտառապատ լեռներն, անդնդախոր ձորերն, ահարկու կիրճերն, սեպածև ժայռերն, անմատչելի քարայրներն, թաւախիտ անտառներն, անառիկ բերդերն և բնութենաստեղծ ամրոցներն սոսկալի երկիւղ ազդելով արտաքին թշնամեաց վերայ՝ անձեռնամխելի պահած են մեր սուրբ Հայրենիքը, Ղարաբաղը, նոցա բոլոր յարձակումներից:

Ղարաբաղի լեռնոտ դիրքն, մաքուր օդն, վճիտ ջուրն և սննդարար կլիման պարզևած են բնակչաց մի նահապետական և յատուկ կենցաղավարութիւն, ազատ կեանք, վայրագ բնաւորութիւն, յաղթանդամ կազմուածք, գօրեղ ոյժ, աներկիւղ սիրտ, հիանալի զինաշարժութիւն և դիւցազնական արիութիւն»²:

Այնուհետեւ սեղմ ցույց է տրված Սիսական թագավորական տոհմի ծագումը մինչեւ մելիքության եւ Ջալալյան Սարգսի կաթողիկոսության ժամանակները: Միաժամանակ ներկայացված է Ղարաբաղի խանության ստեղծման, Մելիք Շահնագարի թողտվությամբ Փանահի՝ Շուշվա բերդին տիրություն անելու եւ վայրագ խաների՝ Փանահի, Իբրահիմի, Մեհտի Ղուլիի կողմից տարված ծանր քաղաքականության պատկերը, որը գրեթէ պառակտեց, քայքայման հասցրեց Արցախի մելիքությունները եւ որի շուրջ հյուսվել են ապագա պատումները. «Ահաւասիկ այս ներքին երկպառակութիւնն էր, որ ձգտում էր վնասել Ղարաբաղի քաղաքական, բարոյական և տնտեսական կենաց, որոց անկարող եղած էին վնասել այնքան արտաքին գօրեղ ուժերն»³:

¹ Նույն տեղում, էջ 70:

² Նույն տեղում, էջ 71:

³ Նույն տեղում, էջ 76:

«Գաղտնիք»-ը հետաքրքիր լայն քննողական դաշտ է բացում՝ կապված Ղարաբաղի ներքին եւ արտաքին կյանքի բացահայտման հետ՝ պատասխանելով ամեն կարգի հարցադրումների: Ուստի, մեկնելով այն, կարելի է ճշտիվ գաղափար կազմել թե՛ տվյալ ժամանակաշրջանի, թե՛ քաղաքական եւ տնտեսական, հոգեւոր եւ աշխարհիկ, թե՛ ռազմավարական այն կարեւոր, փաստացի հանգամանքների մասին, որոնցով կամա թե ակամա պարուրված էր կամ շնչում էր Ղարաբաղը եւ որոնց միջոցով շոշափելի են դառնում մեզ համար շատ ու շատ կարեւորագույն հարցեր, ինչու չէ՛ նաեւ կապված լեզվի, արցախաբարբառի, բանահյուսական երգերի, աշուղական եւ քերթողական հետաքրքիր եւ բարձր նորովի դրսեւորումների, գրական ժանրատեսակների, վարչական, քաղաքական անչափ կարեւոր եւ սուր հարցադրումների հետ...

«Գաղտնիք»-ը բացում է XVIII դարի արցախահայության ծանր ու դրամատիկ ճակատագրի գիրքը, եւ թող որ՝ ինչ-որ տեղերում պատմականության որոշ հարցերի չհարաբերող բացթողումներով, բայց եղելությունները հիմնականում խոսում են ժամանակաշրջանը ներկայացնող եւ բնութագրող բնորոշ հարաբերություններով: Մենք իրավունք չունենք «Գաղտնիք Ղարաբաղի»-ն փակել եւ ցույց տալ, թե պատմական այդ ուսումնասիրությունը այդպես էլ պետք է մնա տաբուի տակ: Ո՛չ, այն պետք է ներկայացնել հանրությանը, գիտական շրջանակներին մղել՝ զբաղվելու գրքի արժեքաբանման հարցով, ինչը եւ առաջին հերթին հանձն ենք առել մենք: Պետք է մեկ անգամ ընդմիջտ վերցնել այդ ուսումնասիրության վրա դրված արգելքը, սպանիչ, անհարկի զգուշավորությունը եւ օգտագործել այն որպես մեր ժողովրդի ստեղծած հոգեւոր բարձր արժեքներից մեկը: Յետեւենք որոշ փաստախնդիրների եւ համոզվենք մեր ձեւակերպումներում. «Ահա սոյն ներքին երկպառակութիւններն բացին արիւնահեղ պատերազմների ընդարձակ ասպարեզներ, որոց մէջ աւելի բազմապատկուեցան հարազատ-մեւիւքների և հարազատ ժողովրդեան ռազմագիտական կրթութիւններն, դիւցազնական քաջագործութիւններն և յաղթական հանդէսներն: Յայրենիքը, Ազգը, Կրօնը, հարազատ-մեւիւքաց ազատ իշխանութիւնը պաշտպանելու անդիմադրելի եռանդն բուռն զօրութեամբ պատերազմի դաշտն մղեց համարեա՛ թէ բոլոր հայ հարազատ անհատները: Մեր սուրբ Յայրենիքում զէնք գործածելու հարկն բնութիւն դարձաւ, պատերազմն՝ արիեստ, արիւնհեղութիւնն՝ օրէնք, մարդասպանութիւնն՝ մսագործութիւն, աւարառութիւնն՝ սեփականութիւն և բոլոր ճըռերը գոնդ անելն՝ անհրաժեշտ ձգտում»: Խոսվում է նաեւ զինվորական արիեստների զարգացման մասին՝ կապված երկրի քաղաքական կյանքի անհանգստությունների հետ. «Ստիպողական հարկն երկրում կատարելագործեց հրա-

ցան, ասորճանակ, թուր, երկսայրի, վաղակ, վառօդ, գնդակ, վառօդեղջիւր, գնդակաշարան, փամփուշտ շինելու արուեստները: Ձի աշտանակելն, արագ զինավարժութիւնն, նշանակետին անվրէպ զարնելն դարձած են հասարակաց սովորական արուեստներ, որոց մէջ վարժ են այսօր ո՛չ միայն Ղարաբաղի հայ տղամարդիկ, այլ և ծերունիք, պառաւունք, կանայք, պատանիք և օրիորդք»¹:

Հեղինակը պարսավով է խոսում ողորմելի, անօրեն մելիքների ու նրանց ընտանիքների մասին, որոնք կարծես բանտարկյալ էին իրենց բերդերում: Մեկնաբանվում է Իբրահիմը՝ յուր քաղաքական երկդիմի մղումներով, երբ իրեն անրապնդելու նպատակով տարբեր ցեղախմբեր է բերում Ղարաբաղ՝ ավելի խարդախորեն գործելով, գերազանցելով հորը՝ Փանահին, ձգտելով Ղարաբաղն աշխարհիկ եւ հոգեւոր օրինական տերերի իշխանությունների կործանման անընդմեջ շրջապտույտում պահել: Վերջինս յուր արշավանքների ժամանակ անընդմեջ պարտություններ էր կրում Դիզակի մելիք Եսայուց, Ջրաբերդի մելիք Ադամի եւ մելիք Յովսեփի համագործակցութեան, մելիք Ադամից: Հոր քաղաքականությանը հետեւող (այն նաեւ առկա է Պլատոն Ջուբովի «Ղարաբաղի աստղագետը» պատմավեպում) Իբրահիմը Գանձասարի զաղտնի հանրագրի կալանավորումից (1785թ.) մի քանի ամիս հետո նամակով փորձում է Մելիք Մեջլումին խոհեմության կոչել՝ ձգտելով իրեն Ղարաբաղի տիրակալ ներկայացնել:

Իբրահիմը բոլոր մելիքներին եւ հովհաննես կաթողիկոսին եւս հրավիրում է Շուշի եւ բարեկամության երդումը դրժելով՝ բանտ նստեցնում... Այս ամենի մասին Կաբեւ Ջաքուց իմանալով՝ հայ քաջերը, որոնք նախագգում էին Իբրահիմի խարդախությունը, մազլցելով Շուշիի պարիսպները՝ զիշերով մտնում են քաղաք, բանտի պահապաններին գլխատում եւ փշրելով բանտի դռները՝ ազատում գերյալներին: Սակայն հովհաննես կաթողիկոսին գտնում են թունավորված-սպանված, իսկ Մելիք Բախտամին՝ հանրագրի հետ, պարզվում է, արքորել էին Պարսկաստան:

Մելիք Մեջլումը, մի բուռ ոսկի տալով 20 քաջերին, որոնց հետ էր նաեւ Աբրահամ Բեկնազարյանը, ասում է. «Սիրելի՛ Բեկնազարեանց (Աբրահամ), քսան և հինգ քաջերով հետապնդիր յետ բերել Մելիք-Բախտամը և իւր բերդում հանգստացնել: Աստուած ձեզ հետ»²: Մելիք Բախտամը Դիզակի հանգուցյալ քաջ Մելիք Եսայու որդին էր, որին շահի հրովարտակով մելիքության կարգեցին 1781 թվականին:

¹ Նույն տեղում, էջ 76-78:

² Նույն տեղում, էջ 83:

Մեծ ժողովրդականություն վայելող Աղա Մահմեդ շահն անասելի բարկացած էր անօրեն խաների, այդ թվում նաև՝ Իբրահիմի վրա: Վերջինս էլ յուր հերթին ճանապարհներ էր որոնում շահին սիրաշահելու, եւ առիթը Քանձասարի ժողովի գողացված հայտնի հանրագիրն էր եւ Դիզակի Մելիք Բախտամը:

Մելիք Մեջլումի ուղարկած 25 քաջերը, երբ հասնում են Խուղափերին կամրջի մոտ, դիզակցի մի ձկնորսից իմանում են, որ Մելիք Բախտամին տանող զորախումբը (40 հոգի) չորս ժամ առաջ անցել է սահմանը:

Քաջերը հուսահատվում են, բայց դարանակալում են Բարգուշատի գետեզերքին եւ Շուշի վերադարձող 40 զինվորներին գլխատում: Նրանցից մեկի՝ Շիրին յուզբաշու մոտ որպես կաշառք հայտնաբերում են Մելիք Բախտամի տված 200 թուման փողը եւ հայտնի հանրագիրը, որը Մելիք Բախտամի գործադրած հնարամտությամբ պիտի հանձնվեր հայ մելիքներին: Իսկ պատմության էջերում զետեղված անհանգստալից տողերը հետեւյալն են գուժում. «Մելիք-Բախտամի հետ Պարսկաստան էր գնում ահա այսպես և Ղարաբաղի Հայոց անհաւատարմութիւնն, կոտորուած պատիւն և աղարտուած անունն, զորս հարկ էր յետ դարձնել ճանապարհից»¹:

Ինչպես տեսանք, Ղարաբաղի պատիվը փրկեց պարսից աքսորյալ դարձած, քաջ Մելիք Եսայու՝ նույնքան քաջ, բայց պարսից բանտերում սիրտն ու հոգին մաշած եւ մահացած Մելիք Բախտամը:

Մելիք Աղամյան Մելիք Մեջլումը, որ Հովհաննես կաթողիկոսի քրոջ որդին էր, Գյուլիստանի իշխան Մելիք Աբովի հետ Ջրաբերդում ուրախությամբ ընդունում է հանրագիրը, մեծ կսկիծով կաթողիկոսական տեղապահ ընտրում Ջալալյան Սարգիս եպիսկոպոսին:

Եվ այսպես, մեր հայացքի առջեւով սահում են Ղարաբաղի մելիքների հուսացումները մերթ պարսից շահերից, մերթ ռուսաց միապետներից ու այս ծանրագույն ճանապարհին՝ անօրեն դրածոներից, Ղարաբաղի ոխերին թշնամի խաներից: Փանահի հաջորդ Իբրահիմից հասնող խարդախությունների շարանը վավերագրերի ու պատմական անհերքելի ապացույցների արժեք է ձեռք բերում, որը փորձում ենք ներկայացնել գիտական գնահատությամբ:

Իբրահիմը կան պետք է խարդախ ու խաբեբա կոչվեր շահի կողմից, կան մելիքների անհավատարմությունը հաստատող փաստաթղթեր ուղարկեր շահին:

¹ *Նույն տեղում, էջ 85:*

Վերոհիշյալ մեկիքները հանրագրի սեւագրությունը եւ հայերի ու ռուսների միջեւ տարված գրագրությունները պահանջեցին հանգուցյալ կաթողիկոսի եղբայր Սարգիս եպիսկոպոսից եւ թաքցրին Ջրաբերդի մեկիքարանի ստորգետնյա աներեւույթ ու անհայտ ծածկապահարանում...

Իբրահիմին խիստ անզորության էր մատնել նաեւ ռուս զորապետ Բուրնաշովի՝ 4000-անոց զորքով Ղարաբաղում երեւալու հնարավոր վտանգը: Իբրահիմի հրամանով պետք է խուզարկվեր Գանձասարի դիվանը եւ կաթողիկոսական ձեռագրադարանը, եւ գրավվեին հնարավոր փաստաթղթերը...

Մեկիքները նախօրոք բոլոր փաստաթղթերը երեք մասի են բաժանել եւ թաքցրել Գանձասարի եւ Խոթա վանքի մերձակայք-կենտրոնատեղիում մի քարայրում, երկրորդը՝ Ջրաբերդի ստորգետնյա անհայտ թաքստոցում, երրորդը՝ Գյուլիստանի Զոռեկա վանքի հարեւանությամբ: Ձեռագրերը լուսաբանում էին Ղարաբաղի՝ գիտականորեն խիստ արժեքավոր պատմությունը՝ հարազատ եւ անօրեն մեկիքների վարքը, ծագումնաբանությունը, Աղվանից թագավորների, կաթողիկոսների ծագումնաբանությունը:

«Գաղտնիք»-ի համապատասխան էջերում թվագրված են այն հեղինակներն ու գրքերը, որոնք թաքցրած կային ձեռագրերում: Դրանցից են՝ 1. Երեմիա կաթողիկոսի «Պատմութիւն կաթողիկոսացն Աղուանից», «Ծագումն թագաւորացն Աղուանից», «Ծագումն Ջալալեան տոհմի ի Վախթանկ թագաւորազնէ» (հեղինակը նշում է, թէ այդ գրքում (ձեռագիր) «սկզբից մինչև իւր օրերն շարունակած էին Ջալալեան Գրիգորիս և Եղիա վարդապետներն և սոցա հետագաներն»¹, «ժամանակագրութիւն անցից» (Ղարաբաղի քաղաքական, եկեղեցական բոլոր պատմությունները, ուր զետեղված է մեկիքների գործունեությունը), 2. Եղիա վարդապետի «Արշաւանք Թաթարաց և պատերազմ ի Կաչաղակաբերդին», 3. Եսայի կաթողիկոսի «Ծագումն և պատմութիւն Մեկիք-Յայկազեանց Մեկիք-Եսայեայ, իշխողին Ջրաբերդի», «Ծագումն և պատմութիւն Մեկիք-Աբովի առաջնոյ, իշխողին Կիւստան գաւառի», «Յարաբերութիւն Յայոց ընդ Ռուսաց» (պաշտոնական գրությունների պատճեններ), 4. Ղեւոնդ վարդապետի «Մեկիք Շահնազար Երրորդ», 5. Մովսէս վարդապետի (Գանձասարի միաբան) «Վանորայք Արցախի և կալուածք նոցա» (Փոքր Սյունիքի վանքերի մասին է եւ գրվել է Եսայի կաթողիկոսի հրամանով) գրքերը եւ հիշատակարանները:

¹ Տես նույն տեղում, էջ 89-92:

Резюме

История армянской литературы и периодической печати свидетельствует о явлениях, носящих спорный характер, которые привлекли внимание определенных литературных, критических и публицистических кругов.

В 1886г. в Санкт-Петербурге в переводе (с габара на современный армянский язык) Бархударяна Макара при поддержке мецената Аракела-ага Цатуряна было издано историческое исследование Бекназаряна А. "Таїна Карабах".

В ходе подробного анализа мы пришли к выводу, что исследование "Таїна Карабах" содержит разносторонние исторические документы, объяснения страниц борьбы армянского народа Арцаха - объяснения, связанные с русско-персидским нашествием в течение XVIIIв. и в начале XIX в., с русско-армянскими-арцахскими интересными отношениями, а также с историческими,художественно-литературными, и другими толкованиями, с раскрытием и выявлением истории научной мысли Арцаха.

С этой точки зрения исследуемый материал приобретает современное и научное звучание.

Summary

In the history of Armenian literature and periodicals there were debatable phenomena which became the focus of certain literary, critical and publicistic circles.

Après Begnazaryan`s historical investigation "Mystery of Karabagh" (translated from Grabar into Modern Armenian by Makar Barkhudaryan) was published under the patronage of Arakel-aga Tsaturyan in St. Petersburg in 1886.

But detailed analysis of this work has brought us to the conclusion that "Mystery of Karabagh" contains diversive historical documents concerning the periods of Artsakh peoples` struggle against Persian invasions in the XIX and in the beginning of the XX centuries; historical, and other interpretations of Russian-Armenian-Artsakh relationships; opens and elucidates the development of the scientific thought in Artsakh.

Thus, the material under investigation provides a modern and scientific view point.